

էսաց.—Իս էն իմ, էսաց, յիշմ իմ խացն ի գինին, Տէր կեն-  
դանին, Մարութայ բանձր Աստուարածին, խաչ պատրաղին, վերա  
իմ աջ թիւին:

Էսաց.—Ընձը շանք տու:

Դաւիթ ուր թիւ<sup>1)</sup> էբաց, շանք իտու. որ շանք իտու, մտե  
խաչ էնու թիւու վերայ էր: Խանդիւթ խաթիւն խասաւ, պագ-  
նից:

Էլաւ էրկու նշան, որ զԴաւիթ առնը:

Էն գիշիր Դաւիթ միտք վէ էսաց.—Աստուած, քի իմ կանչի,  
Օղան-Տողան\*) թագաւորու ասքար կեայ պիւլիւր Խանդիւթ  
խաթնը քեաղքին տնը, մարդ չ'կէրայ էնու ջհաբ<sup>2)</sup> տայ:

Խլիսուն, ինչ աղօթրան բացուաւ, Խանդիւթ խաթիւն էլաւ  
իրիշկից, տեսաւ չադրքիր պիւլիւր խօր քեաղքին դրած ին:

Խէր ճամբսից մատ Խանդիւթ խաթիւն, էսաց.—Խանդիւթ  
խաթիւն, քիւ մարդիրուց, ինչ էկած յէռջիւ քի, գլխաւոր էնիս,  
ընը, ասքրի խիտ կուիւ էնը:

Խանդիւթ խաթիւն շատ էլաց, տրտմաւ, էսաց.—Ափսճւս, իս  
Դաւթին նշանիցի յիրեկուն, էլ մէկէնիր իմ խաթար<sup>3)</sup> չ'ին էնի.  
ափսճւս, Դաւիթ տ'երթայ սպանուը:

Էլաւ, քեառսուն էլ գեաղտիկ մէկ-մէկ տարաւ, էսաց.—Իս  
ձի տ'առնիմ, Դաւիթ չըմ առնը, կեացէք ասքարը յէռջիւ, կուիւ  
էրէք:

Յըմէն էլ քեառսուն ասին.—Տիւ Դաւիթն իս նշանի, մինք  
չինք էրթայ. թըն քիւ Դաւիթ էրթայ, կուիւ էնը:

Պանչից շալեւէն զԴաւիթ, առից, տարաւ. տարաւ էնդեղ,  
էսաց.—Դաւիթ, էսաց, իմ խէր ճամբսի, ասի՝ մէկ մարդ տ'եր-

1) Թւ: 2) Պատասխան: 3) Խօսք, պատուէր:

\*) Ա. վարիանտով Չինմաչինի թագաւոր: Բ. վարիանտով՝  
Օղան, Տողան տարբեր անձնաւորութիւններ են. «Մէկ Օղանայ  
թագաւորն ի, մէկ Տողանայ. Աջմու էն կանէն ին»: